# ԼՂ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ, ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ 2021 Թ. ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

## ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ
## 2021Թ.ՄԱՅԻՍԻ 26–ՀՈՒՆԻՍԻ 18

region

ԵՐԵՎԱՆ 2021

*Հետազոտության մեթոդաբանությունը եւ արդյունքների վերլուծությունը՝*
*«Ռեգիոն» կենտրոնի տնօրեն* ***Լաուրա Բաղդասարյանի***

*Դիտարկման խումբը՝* ***Սոնա Քյուրքչյան, Մարինե Սարգսյան, Անժելա Չոբանյան, Մերի Սարգսյան, Տիգրան Բաղդասարյան***

*Արդյունքների տեխնիկական մշակումը,*
*հաշվարկը, աղյուսակներն ու գրաֆիկները՝* ***Շողիկ Ստեփանյանի***

**«Ռեգիոն» հետազոտական կենտրոն**

www.regioncenter.info

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ընտրություններ հետպատերազմյան լարված պայմաններում ---------------------------------------------------- 4

Ինչո՞ւ ՖԲ-ում ------------------------------------------------------------------------------------------------------------------ 8

Ի՞նչ ենք հետազոտել ------------------------------------------------------------------------------------------------------ 10

Ի՞նչ եւ ինչպե՞ս ենք հաշվարկել/հետազոտության մեթոդաբանությունը ---------------------------------------- 11

Քարոզչության ինտենսիվությունն ու բնույթը ՖԲ-ում ------------------------------------------------------------ 13

Հակամարտության համատեքստի ինտենսիվությունը ------------------------------------------------------------ 14

Հակամարտության համատեքստում ինչի՞ մասին. թեմաների ռեյտինգ ---------------------------------------- 22

Հակամարտության համատեքստում ո՞ւմ մասին եւ ինչպե՞ս ---------------------------------------------------- 30

Առաջնորդների մասին /ինչպե՞ս ---------------------------------------------------------------------------------------- 32

Այլ երկրների ու միջազգային կազմակերպությունների մասին/ ինչպե՞ս ---------------------------------------- 36

Լսարանների արձագանքները հակամարտության համատեքստի նյութերին –---------------------------------- 48

Երիտասարդները քարոզարշավի ընթացքում ---------------------------------------------------------------------- 50

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ------------------------------------------------------------------------------------------------ 53

ՀԱՎԵԼՎԱԾ ------------------------------------------------------------------------------------------------------------------ 58

# ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԼԱՐՎԱԾ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Հայաստանում 2021թ. հունիսի 20-ի արտահերթ խորհրդարանական ընտրությունները պետք է պաշտոնապես ձեւակերպեին գործող իշխանությունների նկատմամբ հանրության վերաբերմունքը, նպաստեին 2020թ. Ղարաբաղյան պատերազմի հետեւանքով հասունացած ներքին ճգնաժամի եւ «ո՞վ է զբաղվելու հակամարտության հետագա զարգացումներով» հարցի լեգիտիմ լուծմանը:

Հետպատերազմյան փողոցային բողոքների ալիքն ընտրությունների շեմին հանդարտվել էր, բայց հասարակական գրգռված, բողոքական մթնոլորտը՝ ոչ: Գետնի վրա մինչ այդ, ընտրությունների ընթացքում եւ հետո էլ ծավալվող գործընթացները փոխեցին հակամարտության հարցում շեշտադրումները: Այժմ խնդիրը ոչ միայն ԼՂ բնակչության, այլեւ ՀՀ առաջնային անվտանգությունն էր դարձել:

Ադրբեջանական ղեկավարության նաեւ պատերազմից հետո շարունակվող կոշտ, շանտաժի հռետորաբանությունը, Հայաստանի տարբեր շրջաններն ադրբեջանական պատմական տարածքներ հռչակելը, վաղ թե ուշ այնտեղ վերադառնալու հայտարարություններով[1] զուգորդվեց «մայիսի 12-ից ՀՀ սուվերեն տարածքներ ադրբեջանական

---

[1] Ի.Ալիեւ, « Այո, Արեւմտյան Զանգեզուրը մեր նախնիների հողերն են: Ես ասել եմ, որ մենք վերադառնալու ենք այնտես: Ես դա ասել եմ դեռ 10 տարի առաջ …Մենք պետք է վերադառնանք, ու վերադառնում ենք: Մեզ ոչ ոք չի կարող կանգնեցնել», http://interfax.az/view/839877:

ստորաբաժանումների ներթափանցումներ»[2]-ով: Նախքան Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ սահմանագծման եւ սահմանազատման մասին դիսկուրսի շրջանառումը ադրբեջանական պաշտոնական հայտարարություններով «տեղեկացվում էր», թե իրենց զորքերը տեղակայվում են այդ տարածքներում պատմական իրավունքի ուժով, այդպես նրանք վերականգնում են խորհրդային տարիների հայ-ադրբեջանական վարչական սահմանները:
Արվում էին նաեւ տարածաշրջանային հաղորդակցությունների հարցերով (Ռուսաստան-Հայաստան-Ադրբեջան) պայմանավորվածության[3] հետ կապված իրարամերժ հայտարարություններ: Հղում անելով ապաշրջափակման համատեքստի ձեւակերպումներին՝ ադրբեջանական կողմը հայտարարում էր Զանգեզուրի միջանցք բացելու մասին, հայկական կողմը պնդում էր, որ պայմանավորվածությունները ոչ թե միջանցքի, այլ ճանապարհների ապաշրջափակման մասին են եղել[4]:

Ադրբեջանական ստորաբաժանումների առաջխաղացումների արդյունքում դեռ 2020թ. դեկտեմբերից մի շարք սահմանային հատվածներում հայկական ու ադրբեջանական ռազմուժերի միջեւ հեռավորությունը կրիտիկական կրճատվել էր, ուրիշ հատվածում միեւնույն գծի վրա նրանք հաջորդաբար էին կանգնած:

---

[2] ՀՀ սուվերեն տարածքը խախտելու մասին անընդհատ ընդգծվել է ՀՀ ԱԳՆ-ի, մայիսից արված այլ պաշտոնական հայտարարություններում, https://www.mfa.am/hy/interviews-articles-and-comments/2021/05/25/mfa_statement/10976:

[3] Այս մասին հանրությունը տեղեկացավ 2020թ.նոյեմբերի 10-ի հրադադարի մասին հայտարարությունից, 9-րդ կետ, https://www.primeminister.am/hy/press-release/item/2020/11/10/Announcement/:

[4] Նիկոլ Փաշինյան, «Միջանցքային» տրամաբանությամբ հարց Հայաստանի Հանրապետությունը չի քննարկել, չի քննարկում և չի քննարկելու», https://www.primeminister.am/hy/press-release/item/2021/05/19/Nikol-Pashinyan-meeting:

ՀՀ սուվերեն տարածքներից ադրբեջանական ռազմուժը քաղաքական գործիքակազմով ետ շրջելու փորձերն[5] արդյունք ոչ ընտրությունների շեմին, ոչ էլ ետընտրական առաջին շրջանում չտվեցին: Ընտրություններից հետո, հուլիսի 12-ին Հայաստանի եւ ԱՀ Նախիջեւանի ավտոնոմ հանրապետության, իսկ հուլիսի 28-ին՝ Հայաստանի Գեղարքունիքի մարզի սահմանային գոտիներում տեղի ունեցած մարդկային կորուստներով բախումները ՀԱՊԿ հայտարարություններում[6] ձեւակերպվեցին որպես սրացումներ ու միջադեպեր, այլ ոչ թե ՀՀ սուվերեն տարածքների նկատմամբ ոտնձգություններ:

Ընտրությունների շեմին ու ընթացքում էլ դեռ սուր էր մնում հայ ռազմագերիների ու պատանդառված քաղաքացիական անձանց հարցը: Ադրբեջանը նրանց վերադարձնում էր փոքր խմբերով, Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Վրաստանի միջնորդությամբ, որոշ զիջումների, վերջին անգամ՝ հակամարտության գոտու մի հատվածում Ադրբեջանին փոխանցված ականապատման քարտեզների դիմաց:

---

[5] Հայաստանն այս հարցով շփվում էր ՌԴ, Ֆրանսիայի եւ այլ երկրների ղեկավարների հետ, մայիսի 13-ին նախաձեռնեց պաշտոնական խորհրդակցություններ ՀԱՊԿ-ի հետ, որի անդամն է:

[6] **Տես՝ «**Ջաս. ՀՀ-ի հարավում իրավիճակի սրումը «սահմանային միջադեպ» է և չի համապատասխանում ՀԱՊԿ կանոնադրության դրույթներին» (https://www.azatutyun.am/a/31338995.html), ՀԱՊԿ Գլխավոր քարտուղարի մեկնաբանությունը հայ-ադրբեջանական սահմանին հուլիսի 12-ին ծագած իրավիճակի վերաբերյալ (հուլիսի 14, https://odkb-csto.org/news/news_odkb/kommentariy-sekretariata-odkb-o-situatsii-na-armyano-azerbaydzhanskoy-granitse-voznikshey-12-iyulya-/?sphrase_id=65198), ՀԱՊԿ Գլխավոր քարտուղարի մեկնաբանությունը հայ-ադրբեջանական սահմանի իրավիճակի վերաբերյալ (հուլիսի 29, https://odkb-csto.org/news/news_odkb/kommentariy-generalnogo-sekretarya-odkb-otnositelno-obstanovki-na-armyano-azerbaydzhanskoy-granitse/):



region

Զուգահեռ տեղի էին ունենում տարածաշրջանում ձեւավորված նոր ստատուս-քվոյի սրբագրման բարդ աշխարհաքաղաքական զարգացումներ, իսկ Լեռնային Ղարաբաղում՝ ետպատերազմյան հումանիտար սուր խնդիրների, պատերազմից հետո վերադարձած բնակչության առօրյա կենսագործունեության կարգավորման գործընթացներ:

Ահա ընտրություններին նախորդած, զուգահեռ ընթացած եւ հաջորդած այս բարդ համատեքստն էլ կազմեց 2021թ. ՀՀ ԱԺ ընտրությունների **գլխավոր առանձնահատկությունը:**

**Ընտրությունների երկրորդ առանձնահատկությունը** մինչ այդ հայաստանյան նախընտրական գործընթացներից եւ ոչ մեկում չարձանագրված մեծ քանակի քաղաքական ուժերի մասնակցությունն էր (21 կուսակցություն եւ 4 դաշինք, այդ թվում՝  խորհրդարանական երեք ուժեր, Հայաստանի նախկին նախագահներն իրենց թիմերով, արտախորհրդարանական մյուս ընդդիմությունը): Նրանց շարքերում էին 17 նոր կուսակցություններ, որոնք ստեղծվել էին ընտրություններին նախորդած 1 ամսվա - 2, 5 տարվա ընթացքում[7]:

**Երրորդ առանձնահատկությունն** այս ընտրություններով հայ հասարակության, ներառյալ նաեւ ԼՂ բնակչության ու Սփյուռքի ներկայացուցիչների գերընդգծված շահագրգռվածությունն էր: Ընտրություններին նախորդած ժամանակահատվածում եւ ընթացքում հարցը, թե «ո՞վ է ղեկավարելու երկիրը», հաճախ է ներկայացվել որպես հակամարտության ու Հայաստանի հեռանկարի, ԼՂ բնակչության հետագա ճակատագրի, իրավիճակը հնարավորինս

[7] 17 նոր կուսակցություններից 3-ը ընտրությունների գնացին այլ ուժերի հետ դաշինքներով, 14-ը՝ առանձին ցուցակներով: Այդ նոր, առանձին մասնակցած կուսակցություններից 8-ը ստեղծվել էին ընտրություններին նախորդած 1-6 ամիսների ընթացքում:

շտկելու որոշիչ հանգամանք: Ընտրությունների ընթացքում այս թեզն ակտիվորեն շրջանառվում էր նաեւ որպես քարոզչական ազդեցիկ միջոց:

Բայց ինչպես ցույց տվեցին ընտրությունները, վարչապետի պաշտոնակատար Ն. Փաշինյանն ու նրա Քաղաքացիական պայմանագիր կուսակցությունը կարողացան մնալ իշխանական դիրքում: Իսկ ողջ հետհեղափոխական ժամանակահատվածում նրանց առավել կոշտ ընդդիմախոսները՝ նախկին նախագահներ Ռ. Քոչարյանի ու Ս. Սարգսյանի քաղաքական թիմերը, արտախորհրդարանական ընդդիմությունից վերածվեցին խորհրդարանական ընդդիմության, դառնալով ՀՀ ԱԺ երկրորդ (Հայաստան դաշինք) եւ երրորդ (Պատիվ ունեմ դաշինք) ուժերը:

Ահա այս բոլոր հանգամանքներից ելնելով մեր «Ռեգիոն» հետազոտական կենտրոնն իրականացրեց ՖԲ սոցցանցում ծավալվող նախընտրական գործընթացների, հակամարտության համատեքստի ստորեւ ներկայացվող հետազոտությունը:

## ԻՆՉՈ՞Ւ ՖԲ-ՈՒՄ

- Երկրում կորոնավիրուսի առկայությունը խոչընդոտ չդարձավ քարոզարշավը տարբեր մարզերի ընտրողների հետ կենդանի հանդիպումների միջոցով նույնպես առաջ մղելու համար: Առանց բացառության բոլոր մասնակից քաղուժերը ՖԲ-ում նախընտրական քարոզչություն էին իրականացնում: Նրանց ՖԲ-յան էջերում մեկտեղվել էին տարբեր բնակավայրերից ուղիղ միացումներն ու հանդիպումների մասին տեսագրությունները, հեռուստատեսային

ու ռադիոհաղորդումները, օնլայն մեդիայի ու զուտ սոցցանցային նախընտրական այլ նյութեր: Արդյունքում քաղուժերի ՖԲ հարթակներում արտացոլվեց նրանց մասնակցությամբ կամ նրանց կողմից ստեղծված բոլոր նախընտրական բովանդակությունների ամբողջական պատկերը:

- ՖԲ-յան հարթակներում էին նաեւ շրջանառվում մեր հետազոտության ծիրում գտնվող ՀՀ փորձագիտական համայնքի, ԼՂ բնակչության եւ Սփյուռքի ներկայացուցիչների դիսկուրս ուղերձները՝ կապված հակամարտության համատեքստի գործընթացներում ներքին ու արտաքին դերակատարության, զուտ նախընտրական զարգացումների հետ:

- Չնայած ՖԲ-ի նկատմամբ վերջին ժամանակահատվածում նաեւ Հայաստանում զարգացող սկեպսիսին, (ատելության խոսքի անսանձ շրջանառման, մանիպուլյատիվ գործողությունների, այլ պատճառներով), Հայաստանում դեռ կայուն է այս սոցցանցը որպես օպերատիվ տեղեկատվության շրջանառման հարթակ օգտագործելու ավանդույթը: ՖԲ-ն նաեւ ոչ ընտրական ժամանակահատվածներում ակտիվորեն օգտագործում են ինչպես իշխանությունները, այնպես էլ ընդդիմությունը:

# Ի՞ՆՉ ԵՆՔ ՀԵՏԱԶՈՏԵԼ

Մեր ուշադրության կենտրոնում են եղել նախընտրական քարոզչության ժամանակ[8] ՖԲ-ում շրջանառվող հակամարտության համատեքստի առանձնահատկությունները:

Ուսումնասիրությունն իրականացրել ենք երեք հիմնական դիտանկյուններից՝

- Հակամարտության համատեքստի ինտենսիվությունը նախընտրական եւ ետընտրական այլ թեմաների նկատմամբ,
- Հակամարտության համատեքստի ընդհանուր եւ մասնավոր դիսկուրս առանձնահատկությունները (ըստ մրցակից քաղուժերի, ըստ օգտատիրական տարբեր խմբերի),
- Լսարանների վերաբերմունքն առաջ մղվող ուղերձների նկատմամբ:

**Միասնաբար հետազոտել ենք 92 ՖԲ էջ, այդ թվում՝**

- ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի 32 էջ (այսուհետ՝ քաղուժերի էջեր),
- տարբեր քաղաքական նախընտրություններով հայաստանյան փորձագետների, վերլուծաբանների ու այլ մասնագետների 30 էջ (այսուհետ՝ ՀՀ փորձագիտական խումբ),
- ԼՂ ներկայացուցիչների 15 էջ (այսուհետ՝ ԼՂ խումբ)
- ԱՄՆ-ում, եվրոպական երկրներում եւ Ռուսաստանում հայկական սփյուռքի ներկայացուցիչների 15 էջ (այսուհետ՝ Սփյուռքի խումբ):

[8] Որպես նախընտրական փուլ ենք սահմանել մայիսի 26-հունիսի 18 -ի 24 օրը: Մայիսի 26 –ին ԿԸՀ-ն հրապարակեց ընտրություններին մասնակցող ուժերի ցանկը, իսկ հունիսի 18-ը պաշտոնական քարոզչության (հունիսի 7-18) վերջին օրն էր:

Ընտրություններին մասնակցած քաղաքական ուժերի էջերն ընտրել ենք՝ ելնելով նրանց սոցցանցային ակտիվության աստիճանից: Այսպես, որոշ դեպքերում հետազոտել ենք նրանց եւ պաշտոնական, եւ առաջնորդների/ՖԲ-ում առավել ակտիվ ներկայացուցիչների էջերը, ուրիշ դեպքերում՝ միայն պաշտոնական էջերը կամ՝ միայն առաջնորդների էջերը:

ՀՀ փորձագիտական ու Սփյուռքի խմբերը ձեւավորելիս ղեկավարվել ենք նրանց քաղաքական տարբեր նախապատվությունների, հակամարտության թեմայով մասնագիտորեն զբաղվելու հանգամանքներով:
Սփյուռքի խմբի անդամներին ընտրելիս հաշվի ենք առել նաեւ տարբեր երկրներում նրանց բնակության հանգամանքը:

ԼՂ խմբի օգտատերերի դեպքում ղեկավարվել ենք նրանց ունեցած լսարանների չափանիշներով:

**Հետազոտված էջերի ցանկը ներկայացված է Հավելվածում:**

## Ի՞ՆՉ ԵՒ ԻՆՉՊԵ՞Ս ԵՆՔ ՀԱՇՎԱՐԿԵԼ/ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

- Մեկ նյութ ենք համարել հետազոտության ժամանակահատվածում ՖԲ էջում տեղադրված յուրաքանչյուր առանձին նյութ՝ ստատուս, ԶԼՄ-ից «բերված» նյութ, ֆոտո/տեսանյութ/նախընտրական բովանդակության այլ ժանրի նյութ:

- Կոնտենտը, անգամ եթե այն շրջանառվել է օրվա ընթացքում մի քանի անգամ, հաշվարկել ենք որպես մեկ նյութ (օրինակ, երբ օրվա ընթացքում մի քանի անգամ շրջանառվել է միեւնույն գովազդային հոլովակը, միեւնույն նախընտրական պաստառը, կարգախոսը, երբ նույն օրվա ընթացքում շրջանառվել են

հարցազրույցի/ելույթի/դեբատի եւ ամբողջական, եւ հատվածական տարբերակները եւ այլն): Եթե նյութը շրջանառվել է նաեւ հաջորդ օրվա/օրերի ընթացքում, այն հաշվարկվել է:

- Այս կամ այն թեմայի ինտենսիվությունը չափել ենք «մեկ նյութ – մեկ կամ ավելի թեմա» սկզբունքով:

- Հետազոտվող թեմայով հանդես եկող քաղաքական, հասարակական, մասնագիտական եւ այլ խմբերի ներկայացուցիչներին սահմանել ենք որպես թեմայի հեղինակների (ո՞վ է խոսում): Նրանց ակտիվությունը չափել ենք «մեկ հեղինակ՝ մեկ կամ մի քանի թեմա» սկզբունքով:

- Այլ ուժերի եւ նրանց առաջնորդների, այլ երկրների ու միջազգային կազմակերպությունների հիշատակումների (ո՞ւմ մասին է խոսում) ինտենսիվությունը չափել ենք «մեկ հեղինակ –մեկ եւ ավելի թեմա- մեկ եւ ավելի այլ քաղաքական ուժի/գործչի/երկրի/կազմակերպության հիշատակում» սկզբունքով:

- Ուրիշների հիշատակումների նշանները (ինչպե՞ս են խոսում՝ +, -, 0) որոշել ենք՝ ելնելով ձեւակերպումների ուղիղ իմաստաբանական (semantic), այլ ոչ ենթատեքստային գնահատականներից/նկարագրություններից:

- Մեկ նյութում արծարծված թեմաների քանակը հաշվարկել ենք ըստ դրանց հեղինակների փոփոխության եւ ըստ ուղերձների նշանների  (+, -, 0) փոփոխության:  «Որքան հեղինակ՝ այնքան թեմա» եւ « Որքան ուրիշների հիշատակում, այնքան նշան (+, -, 0)» սկզբունքներով:

## ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԻՆՏԵՆՍԻՎՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԲՆՈՒՅԹԸ ՖԲ-ՈՒՄ

### (2021թ. մայիսի 26 - հունիսի 18)

Ֆորմալ տեսանկյունից պաշտոնական քարոզչության 12 օրը (հունիսի 7-18) ՖԲ-ում նույնքան օրով վաղ սկսվեց՝ մայիսի 26-ից, երբ ԿԸՀ-ն հրապարակեց մասնակից ուժերի ցանկը: Հենց այդ օրվանից քաղուժերն իրենց էջերում սկսեցին տեղադրել առաջին քարոզչական նյութերը՝ ցուցակները, կարգախոսները, գովազդային հոլովակները, գործընթացի հետ կապված տարբեր տեղեկատվություն:

Նախընտրական քարոզչության 24 օրերի ընթացքում 25 կուսակցություններ ու դաշինքներ միասնաբար իրենց էջերում շրջանառեցին 4968 նյութ: Բայց տարբեր ուժեր տարբեր ակտիվություն էին ծավալում:

Ստաբիլ ինտենսիվ են գործել երեք ուժեր, որոնց պաշտոնական էջերում մեկ օրվա ընթացքում տեղադրվել են մինչեւ 54 (Հայաստան դաշինք), 46 (Ազգային-ժողովրդավարական բեւեռ), 42 (Պատիվ ունեմ դաշինք) նախընտրական նյութեր: Այնքան, որքան թողարկում է օրվա լրատվություն ապահովող հայաստանյան օնլայն ԶԼՄ-ների մի մասը:

Մյուս խմբում միջին ինտենսիվության քարոզչություն ծավալած ուժերն են, որոնք ստաբիլ ռեժիմով 1 օրում իրենց պաշտոնական էջերով շրջանառել են մինչեւ 25 նյութ (Քաղաքացիական պայմանագիր, Հայ ազգային կոնգրես, Լուսավոր Հայաստան կուսակցությունները):

ՖԲ-ում ստաբիլ պասիվ քարոզչություն վարած քաղուժերի շարքերում ակնհայտ մեծամասնություն են կազմել նորաստեղծ կուսակցությունները, որոնք, օրինակ, Հայաստան, Պատիվ ունեմ, Շիրինյան-Բաբաջանյան դաշինքների, Բարգավաճ Հայաստան կուսակցության (ԲՀԿ) նման չեն ունեցել օնլայն ԶԼՄ-ների աջակցությունը, չունեն հեռուստաընկերություններ:

Այս պասիվ քարոզչություն վարածների խմբում բացառություն է կազմել երկար տարիներ խորհրդարանական ուժ հանդիսացող ԲՀԿ-ն, որի պաշտոնական էջում մեկ օրվա ընթացքում շրջանառվել է առավելագույնը 4 նյութ:

**Տես՝ Հավելված, Աղյուսակ 1:**

## ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏԻ ԻՆՏԵՆՍԻՎՈՒԹՅՈՒՆԸ

Ընդհանուր պատկերով շրջանառված բոլոր կոնտենտների մեծ մասը կազմել են զուտ քարոզչական բնույթի նյութերը, որոնց մեջ չի արծարծվել հակամարտության համատեքստը:

**Տես՝ ստորեւ բերված գրաֆիկը:**




Սակայն թեմատիկ, բովանդակային տեսանկյունից դիտարկելիս ակնհայտ է դառնում, որ հակամարտության համատեքստը կանխատեսելիորեն գերակայել է նախընտրական մնացած դիսկուրսների նկատմամբ:

Այսպես, եթե առանց հակամարտության համատեքստի նյութերում ընդհանուր առմամբ արծարծվել է 13 թեմա, կազմելով բոլոր թեմաների 58%-ը, ապա հակամարտության համատեքստն իր 15 թեմաներով ու ածանցյալ խնդիրներով կազմել է բոլոր թեմաների գրեթե մյուս կեսը 42%-ը:

Մասնավոր դիտարկումները ցույց են տալիս, որ տարբեր մրցակից ուժեր տարբեր ինտենսիվությամբ են անդրադարձել հակամարտության եւ ոչ հակամարտության համատեքստերին:

Գործող իշխանությունները եւ նրանց հանդեպ առավել ագրեսիվ քարոզչություն ծավալած Հայաստան ու Պատիվ ունեմ դաշինքները ոչ հակամարտության համատեքստում հայելանման շեշտադրումներ են արել, առավելագույնը խոսելով ընտրությունների, որպես գործընթացի մասին, սոցիալ տնտեսական խնդիրների ու երկրում տիրող ներքաղաքական զարգացումների/մթնոլորտի մասին: Ոչ հակամարտության համատեքստի նման շեշտադրումներ են արել նաեւ մի շարք այլ կուսակցություններ: Հայ ազգային կոնգրես կուսակցության (ՀԱԿ) համար բացի ընտրական գործընթացի առանձնահատկությունների թեմայից ոչ հակամարտության համատեքստում առաջնահերթ են եղել ներքաղաքական հարցերը, Շիրինյան-Բաբաջանյան դաշինքի համար՝ իրավական համակարգի խնդիրները: Այլ ուժերի դեպքում եղել են այլ թեմաների ու ոլորտների շեշտադրումներ:

Սակայն ընդհանուր ցուցանիշներով ոչ հակամարտության համատեքստում էականորեն քիչ է խոսվել այնպիսի թեմաներից, ինչպես միգրացիան է, կոռուպցիան, բնապահպանությունը, կրթություն/գիտությունը, անգամ պանդեմիկ իրավիճակում՝ առողջապահությունը:

Ի տարբերություն խորհրդարան մտած երեք ուժերի, մնացած ուժերի հակամարտության եւ ոչ հակամարտության համատեքստերի ինտենսիվությունը գրեթե համաչափ է եղել: Բացառություն է կազմել Ազատական կուսակցությունը, որն իր քարոզարշավն առաջ է մղել գլխավորապես հակամարտության համատեքստի խնդիրներով (81.5%):

Եթե խորհրդարան մտած ընդդիմությունն ընտրություններին մասնակցում էր իշխանության գալու հավակնությամբ, հայտարարելով, որ կարողանալու են հասնել հայկական կողմի համար ընդունելի զարգացումների, մյուս արտախորհրդարանական ուժերի մասնակցության դրդապատճառը, ըստ հայտարարությունների, պատերազմի հետեւանքով ստեղծված իրավիճակն էր[9]:

**Տես՝ ստորեւ բերված գրաֆիկները եւ Հավելված, Աղյուսակ 2:**

---

9 «Մենք գալիս ենք արժանապատիվ խաղաղություն հաստատելու համար, մեր սահմաններն ամրապնդելու համար, մեր բանակը վերականգնելու, տնտեսական թռիչքային վերելք ապահովելու, աշխատատեղեր ստեղծելու, աղքատության դեմ պայքարելու և ձեր կյանքի որակը բարելավելու համար: Սա է մեր նպատակը» (Ռ. Քոչարյանի ՖԲ էջից, հունիսի 12, https://www.facebook.com/Robertkocharyan), «Արտաքին և ներքին սպառնալիքներն ինձ ստիպում են որոշում կայացնել մասնակցելու առաջիկա խորհրդարանական ընտրություններին… Ես ամենայն պատասխանատվությամբ եմ հայտարարում՝ լուծում կա, եւ ես լի եմ պատրաստակամությամբ ու վճռականությամբ մեկ անգամ եւս ստեղծել անպարտելի ու հզոր բանակ, որը անխուսափելիորեն կապահովի մեր Հայրենիքի խաղաղությունը» (ԼՂ Պաշտպանության բանակի նախկին հրամանատար Ս.Բաբայանի ՖԲ էջից, Ազատական կուսակցություն, https://www.facebook.com/44.samvel.babayan/posts/485521966206619):


Թեմաներին անդրադարձների ինտենսիվություն/քաղուժեր
Ոչ հակամարտ. թեմաներ (58%)
Հակամարտ. թեմաներ (42%)
13 թեմա
15 թեմա

## Հակամարտության /ոչ հակամարտության համատեքստերի հարաբերակցությունը առավել բարձր ցուցանիշներով քաղուժերի էջերում



Հակամարտության եւ ոչ հակամարտության թեմաների ինտենսիվությունը ՖԲ-յան օգտատիրական խմբերում (ՀՀ փորձագետների, ԼՂ ներկայացուցիչների ու Սփյուռքի խմբեր) կանխատեսելիորեն տարբեր է եղել:

Ընտրությունների ընթացքի եւ նրա հնարավոր վերջնարդյունքի վրա ավելի շատ կենտրոնացած են եղել Հայաստանի փորձագիտական խմբում (68%), քան թե Սփյուռքի (24%) եւ ԼՂ խմբում (8%): Մինչդեռ հակամարտության համատեքստը բոլոր երեք խմբերում շեշտադրվել է գրեթե համաչափ (հիշեցնենք, որ հայաստանյան խմբում ներգրավված են եղել նույնքան էջեր (30), որքան ղարաբաղյան (15) եւ սփյուռքյան (15) էջերը միասին:

**Տես` ստորեւ բերված գրաֆիկը:**


Հակամարտության/ոչ հակամարտության համատեքստի թեմաներ ՀՀ/ԼՂ/Սփյուռքի ներկայացուցիչների էջերում
ՀՀ փորձագետներ
68%
49%
ՀՀ/ԼՂ/Սփյուռքի ներկայացուցիչներ
8%
26%
Սփյուռք
24%
25%
Ոչ հակամարտության համատեքստի թեմաներ ՀՀ/ԼՂ/Սփյուռքի ներկայացուցիչների էջերում
Հակամարտության համատեքստի թեմաներ ՀՀ/ԼՂ/Սփյուռքի ներկայացուցիչների էջերում

# ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ ԻՆՉԻ՞ ՄԱՍԻՆ.

# ԹԵՄԱՆԵՐԻ ՌԵՅՏԻՆԳ

Հակամարտության համատեքստի հետ առնչություն ունեցող իրադարձություններն ու զարգացումները, որոնք ընթացել են ընտրություններին զուգահեռ, էական ազդեցություն են գործել նախընտրական քարոզչության շեշտադրումների, որոշ թեմաների ինտենսիվացման վրա:

ՖԲ-յան հարթակներում շրջանառված բովանդակությունների դիսկուրս վերլուծության արդյունքում մենք արձանագրել ենք 15 թեմաներ[10]: Դրանք շրջանառվել են ինչպես քաղաքական մրցակից ուժերի՝ ընտրողների հետ ունեցած հանդիպումների ժամանակ, այնպես էլ մեդիա տարբեր ձեւաչափի ելույթներում[11]:

---

[10] Մեր սահմանած թեմաների մեծ մասը (անվտանգություն եւ սահմաններ, սահմաններ եւ բանակցություններ, բանակցություններ եւ հակամարտության պատմություն/տարածաշրջանային կոմունիկացիաներ, կոմունիկացիաներ եւ հայ-ադրբեջանական, հայ-թուրքական հաշտեցում/թշնամանք/ռեւանշ, ԼՂ-ում տիրող հետպատերազմյան իրավիճակ եւ տեղահանվածներ) օրգանապես կապված էին միմյանց հետ եւ բավական դժվարացնում էին կոնտենտների թեմատիկ դասդասումները, ու այդ պատճառով մենք ընտրել ենք գլխավոր շեշտադրումներով ղեկավարվելու սկզբունքով:

[11] Այս ընտրությունների ժամանակ բավական շատ են եղել ոչ միայն նախընտրական հարցազրույցները, այլեւ տարբեր ձեւաչափերի դեբատները: Պաշտոնական քարոզարշավի 12 օրերի ընթացքում հենց հակամարտության եւ նրա հեռանկարների թեմաներով տարբեր ուժերի մասնակցությամբ դեբատների շարքեր են անցկացրել Հանրային ՀՀ, Factor.am-ը, Civilnet.am-ը, Azatutyun.am-ը, Մեդիակենտրոն եւ Հոդված 3 ակումբները:

Քաղաքական ուժերի ու հայաստանյան փորձագետների, Ղարաբաղի ու Սփյուռքի ներկայացուցիչների խմբերում էական շեշտադրումներ են արվել անվտանգության առաջնային մարտահրավերների վրա (**ամենաինտենսիվ անվտանգության թեման**): Այս թեմայով ներկայացվել են անվտանգության երաշխիքների եւ բանակի, ռազմաքաղաքական իրավիճակի, ռազմավարական դաշնակիցների եւ անվտանգային համակարգերի, արտաքին միջավայրի եւ հարեւանների, արտաքին քաղաքական կողմնորոշմանը մնալ/չմնալու խնդիրները, միջազգային ներկա գործընթացները, որոնք ազդում են/կարող են ազդել հայկական պետական շահերի վրա: Ռուսաստանի կրավորական պահվածքի, ՀԱՊԿ-ի՝ որպես անվտանգային համակարգի հասցեին բավական հաճախ հնչող քննադատությունների ֆոնին Հայաստանի արտաքին քաղաքական կողմնորոշման, անվտանգային ներկա համակարգից դուրս գալու դիսկուրսը տպավորություն էր ստեղծում, թե սա առավել ամրապնդվող քաղաքական գիծ է: Սակայն, արտաքին քաղաքական կողմնորոշման փոփոխության անհրաժեշտության մասին միանշանակ հայտարարություններ ու պնդումներ անում էին մի քանի քաղաքական ուժեր՝ Ազգային ժողովրդավարական բեւեռը, Հայաստանի եվրոպական կուսակցությունը, Ազատ հայրենիք դաշինքը[12]:

Քիչ չեն եղել նաեւ հայտարարությունները, որոնցով շեշտվում էր, թե Հայաստանն իրականում ոչ մի արտաքին դաշնակից չունի, Հայաստանի միակ դաշնակիցը Սփյուռքն է:

---

[12] « Հայաստանը պետք է իրականացնի ելք ՀԱՊԿ-ի ռուս-թուրքական թակարդից:
Զուգահեռաբար սկսում ենք բանակցություններ Եվրոմիությանն ու ՆԱՏՕ-ին անդամակցելու:
...Մենք միայնակ չենք, Վրաստանի և Ուկրաինայի հետ պետք է մտնենք...» (ՀԵԿԿ ՖԲ-յան էջից, մայիսի 30, https://www.facebook.com/ArmEuroPart):

Մրցակից ուժերի միջեւ սուր պայքարի առիթ է դարձել **հակամարտության պատմության թեման**[13] **(ըստ ինտենսիվության՝ երկրորդ թեման)**, որն առաջ է մղվել «ո՞վ է մեղավոր» լեյտմոտիվով: Այս թեման առավել ակտիվորեն քննարկել, բանավիճել, պարզաբանել են առանց բացառության Հայաստանի բոլոր ղեկավարները: Նրանք, ովքեր ժամանակին ի պաշտոնե զբաղվել են հակամարտության կարգավորման հարցերով, ուղղորդել են հասարակական տրամադրությունները:

Չնայած ավելի պակաս, բայց առկա է եղել նաեւ անցյալը վերագնահատելու, սխալները հասկանալու դիսկուրսը, որը հիմնականում ծավալում էին հակամարտության հարցերով զբաղվելու լիազորություն երբեւէ չունեցած ուժերը, փորձագիտական խմբերը, Սփյուռքի ներկայացուցիչները: Այս վերջին խմբում շրջանառվել են նաեւ նախորդ տարիներին հակամարտության հարցում Սփյուռքի վարած քաղաքականության, պատերազմի արդյունքում տարբեր երկրների համայնքներում տիրող տրամադրությունների, այլ դիտանկյուններից նույնպես:

Ի տարբերություն քաղաքական ուժերի խմբի, ՖԲ-յան մյուս խմբերում անվտանգության թեմայից հետո շրջանառվել է **սահմանների** թեման:

Հակամարտության զարգացման հեռանկարի եւ ԼՂ կարգավիճակի հետ կապված խնդիրների (**բանակցությունների թեմա**), **ռազմագերիների/պահվող անձանց** թեման բոլոր խմբերում համաչափ ինտենսիվ են շրջանառվել:

---

[13] Որպես հակամարտության պատմություն ենք սահմանել բոլոր այն դեպքերը, որոնք նկարագրում են հակամարտության համատեքստում նախկինում՝ ներառյալ նաեւ 2020թ. պատերազմի ժամանակ տեղի ունեցած իրադարձություններն ու զարգացումները: Այդ թվում՝ արտաքին դերակատարների մասնակցությունը հակամարտության զարգացման տարբեր փուլերում, Հայաստանի առաջնորդների վարած քաղաքականությունը, հակառակորդ կողմի պահվածքը, հասարակական վերաբերմունքն ու ընկալումները:

Էական տարբեր է եղել ՀՀ փորձագետների, ԼՂ եւ Սփյուռքի ներկայացուցիչների խմբերում հետպատերազմյան շրջանում **ԼՂ-ում տիրող իրավիճակի թեմայի** ինտենսիվությունը (քաղուժերի խմբում՝ 0,4%, մյուս խմբերում՝ 4%):

Մրցակից քաղուժերը որպես նախընտրական պայքարի գործիք գրեթե չեն կիրառել **տեղահանվածների** թեման: Անդրադարձեր կատարել է Լ.Տեր-Պետրոսյանը, պնդելով, որ ամեն ինչ պետք է անել Հայաստանում դեռ մնացած տեղահանվածներին ԼՂ վերադարձնելու եւ նրանց կյանքն այնտեղ կազմակերպելու ուղղությամբ: Ինչպես նաեւ Ռ.Քոչարյանն ու թիմակիցները, նրան համակրող ՀՀ փորձագիտական խմբի որոշ ներկայացուցիչներ, որոնք հայտնում էին, որ տեղահանվածներն իրենց հայաստանյան անձնագրերով պետք է նույնպես ունենան ընտրություններին մասնակցելու հնարավորություն: Իսկ իշխանությունները խոչընդոտում են դրան:

Ընտրությունների ընթացքում արձանագրված կոշտ քարոզչության, մրցակիցներին հասցեագրված հաճախ սադրիչ հռետորաբանության, ներքին համերաշխության մասին հայտարարություններն (**ատելության խոսքի թեմա)** իրենց ինտենսիվությամբ գերազանցել են հայ-ադրբեջանական, հայ-թուրքական թշնամանքի/հաշտեցման, ռեւանշի թեմաներին: Մինչդեռ ձեռքբերված պայմանավորվածությունները չկատարելու համար Հայաստանին ուղղված մեղադրանքներում ադրբեջանական պաշտոնական շրջանակները հաճախ են խոսել հայկական կողմում հասունացող ռեւանշիստական տրամադրությունների մասին:

Հաշտեցման/թշնամանքի/ռեւանշի թեմաներն  էապես քիչ են շոշափվել նաեւ ՖԲ-յան երեք խմբերում: Հատկանշական է, որ հաշտեցումն ու ռեւանշը շրջանառվել է որպես հնարավոր, սակայն հեռավոր ապագայի խնդիր, իսկ թշնամանքի մասին պնդումներ հիմնականում արվել են անցյալի եւ ներկայի իրադարձությունների վկայակոչումներով[14]:

**Տես՝ ստորեւ բերված գրաֆիկները:**

---

[14] «Հայկական կողմը չգիտես ինչու ուզում է տեսնել խաղաղության նմուշներ: Բայց իրականում մեր տարածաշրջանում ոչ-ոք չի պատրաստվում խաղաղության: Բոլորը վարում են ռազմական գործողություններ: Հիմնական պրոբլեմը քաղաքական ու պետական գործիչների կամքն է», (ԼՂ ներկայացուցիչների խումբ, Հ. Արզումանյանի ՖԲ էջից, https://www.facebook.com/hrachya.arzumanian), « Երեկ Շուշիի հռչակագիրն էր ստորագրվում, իսկ այստեղ մեր քաղուժերի մի մասը քարոզարշավի ժամանակ հայտարարում էր Շուշին անպայման վերադարձնելու մասին: Ինչ անվտանգային իրավիճակի մեջ են դնում այդ քաղուժերն արցախահայությանն իրենց նման հայտարարություններով» (ՀԱԿ-ի ՖԲ էջից, հունիսի 18, https://www.facebook.com/armnatlcongress),
« Ինչ անել այս քարտեզը (ասաց Ազգային օրակարգ կուսակցության ներկայացուցիչը հեռուստադեբատի ժամանակ – Լ.Բ. ), որ դրել եք տաղավարում: Մենք ասում ենք, որ այս քարտեզը փոխելու ենք: Մենք չենք համաձայնվելու եւ թույլ չենք տալու կոմունիկացիաների բացում: Մենք ամեն ինչ անելու ենք, որ վերականգնենք Հայաստանի հանրապետության տարածքը (նկատի ունի ԼՂ-ն ներառյալ -Լ.Բ.) » (Ազգային օրակարգ կուսակցության ՖԲ էջից, հունիսի 11, https://www.facebook.com/nationalagenda.am):


Հակամարտության թեմաների ռեյտինգ /քաղուժեր
Անվտանգություն 40.5%
Հակամարտության պատմություն 13.9%
Սահմաններ 11.1%
Բանակցություններ 10.9%
Գերիներ/դիեր 8.6%
Առաջնորդ 3.9%
Տարածաշրջանային կոմունիկացիաներ 3.8%
Ատելության խոսք 3.4%
Հայ-ադրբեջանական թշնամանք 0.9%
Հայ-թուրքական հաշտեցում 0.9%
Հայ-ադրբեջանական հաշտեցում 0.7%
Իրավիճակը ԼՂ-ում 0.4%
Ժառանգության պահպանում 0.4%
Ռեւանշ 0.3%
Տեղահանվածներ 0.3%

Մենք արձանագրել ենք որոշ նրբերանգային տարբերություններ ՀՀ փորձագետների, ԼՂ ու Սփյուռքի ներկայացուցիչների խմբերում արված թեմատիկ շեշտադրումների միջեւ:

Այսպես, եթե ՀՀ փորձագետների եւ Սփյուռքի ներկայացուցիչների խմբերում առաջին հերթին մտահոգվել են ներկա իրավիճակի առավել հրատապ խնդիրներով (անվտանգություն, սահմաններ, բանակցություններ, գերիներ), թողնելով հակամարտության պատմության թեման 4-րդ եւ 5-րդ տեղերում, ապա Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչների խմբում, որոնց շարքերում կան նաեւ պաշտոնյաներ, հակամարտության պատմության թեման 2-րդ հորիզոնականն է գրավել: Ճիշտ է, այս դեպքում ԼՂ ներկայացուցիչները հիմնականում արձարծել են անցած տարվա պատերազմի հետ կապված զարգացումներն ու ռազմաքաղաքական հետեւանքները:

**Տես՝ ստորեւ բերված գրաֆիկերը եւ Հավելված, Աղյուսակ 3:**


ՀՀ փորձագետներ/ՀԿ ներկայացուցիչներ
Անվտանգություն
Սահմաններ
Բանակցություններ
Գերիներ/դիեր
Հակամարտ. պատմ
35.4%
14.4%
11.5%
9.9%
9.7%


ԼՂ ներկայացուցիչներ/պաշտոնյաներ, փորձագետներ, տեղահանվածներ
Անվտանգություն
Հակամարտ. պատմ
Իրավիճակը ԼՂ-ում
Սահմաններ
Բանակցություններ
28.9%
15.4%
12.7%
11.9%
9.2%


Սփյուռքի ներկայացուցիչներ
Անվտանգություն
Գերիներ/դիեր
Սահմաններ
Հակամարտ. պատմ
Առաջնորդ
31.2%
16.3%
12.9%
11.8%
9.6%

## ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ Ո՞ՒՄ ՄԱՍԻՆ ԵՒ ԻՆՉՊԵ՞Ս

Քարոզարշավի ընթացքում մրցակից քաղուժերը կրկնակի շատ հիշատակել են հակամարտության հարցի հետ այս կամ այն առնչությունն ունեցած/ունեցող արտաքին դերակատարներին, քան թե որոշումներ կայացնելու իրավասությամբ օժտված հայաստանյան ներկա եւ նախկին առաջնորդներին, ավելի քիչ՝ ընտրություններին մասնակցող մրցակից քաղուժերին: Քիչ չեն եղել դեպքերը, երբ քաղուժերն իրենց խոսքում կիրառել են մրցակից ուժերի արտաքին դերակատարների, ներկա եւ նախկին ղեկավարների ընդհանրական ձեւակերպումներ (իշխանություններ, ներառյալ՝ ռազմական ղեկավարությունը, նախկիններ, ընդդիմություն, այլ երկրներ, Եվրոպա, Արեւմուտք, հարեւաններ, մենք եւ այլն):

**Տես՝ ստորեւ բերված գրաֆիկը:**


Ո՞ւմ մասին/ուրիշների հիշատակումներ քաղուժերի էջերում
48%
27%
22%
3%
25 մասնակից քաղուժերի կոնկրետ հիշատակումներ
Առաջնորդներ
Ընդհանուր ձեւակերպումներով հիշատակումներ
Արտաքին դերակատարների հիշատակումներ

# ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ/ԻՆՉՊԵ՞Ս

Նախընտրական փուլը նույնպես հետպատերազմյան բոլոր ամիսների նման ընթացավ կոշտ հակաքարոզչության, հաճախ սադրիչ հայտարարությունների մթնոլորտում, ատելության խոսքի կիրառմամբ, հիմնականում թիրախավորելով Հայաստանի՝ հակամարտության հարցերով բանակցող նախկին եւ ներկա ղեկավարներին:

Բոլորից շատ բացասական եւ բոլորից քիչ դրական բնույթի հիշատակումներ է ստացել Նիկոլ Փաշինյանը: Նրան քննադատող ու սատարող հիշատակումների մակարդակին մոտ են Ռոբերտ Քոչարյանի հիշատակումների ցուցանիշները: Նեգատիվ առումով գրեթե համաչափ են հիշատակվել Սերժ Սարգսյանն ու Լեւոն Տեր-Պետրոսյանը (համապատասխանաբար՝ 83.5% եւ 80.4%): Սակայն Սերժ Սարգսյանին բոլոր նախկին ղեկավարներից ամենից շատ անգամ քաղուժերը հիշատակել են չեզոք (0) բնութագրումներով, իսկ Լեւոն –Տեր Պետրոսյանին բոլորից շատ հիշատակել են դրական (+) բնութագրումներով: ՀՀ գործող նախագահ Արմեն Սարգսյանի՝ քաղուժերի կողմից ձեւավորած իմիջը բաղկացած է համաչափ չեզոք (0) եւ բացասական հիշատակումներից (-):

**Ընդ որում՝**

- Լ. Տեր-Պետրոսյանը բոլորից շատ նեգատիվ (-) հիշատակումներ ստացել է (նվազման կարգով) Քաղաքացիական պայմանագիր (ՔՊ), Ազգային-ժողովրդավարական բեւեռ (ԱԺԲ), Հանրապետություն կուսակցություններից:
- Ռ. Քոչարյանն ու Ս. Սարգսյանը բոլորից շատ նեգատիվ (-) հիշատակումներ ստացել են (նվազման կարգով) ՔՊ-ից, ՀԱԿ-ից, Շիրինյան-Բաբաջանյան դաշինքից:
- Ն. Փաշինյանը բացասական շեշտադրումներով հիշատակվել է ընտրություններին մասնակցած բոլոր ուժերի կողմից, որոնց շարքում առաջին երեք տեղերում են եղել (նվազման կարգով) Պատիվ ունեմ դաշինքը, Հայաստան դաշինքը եւ ՀԱԿ-ը:

Տես՝ ստորեւ բերված գրաֆիկը:



Ֆեյսբուքյան խմբերում հակամարտության համատեքստում ամենից շատ հիշատակվել են Նիկոլ Փաշինյանը, Ռոբերտ Քոչարյանն ու Լեւոն Տեր-Պետրոսյանը: Ի տարբերություն քաղուժերի խմբի ցուցանիշների, ՀՀ փորձագետների, ԼՂ ու Սփյուռքի ներկայացուցիչների խմբերում հիշատակվել է նաեւ ԼՂ նախագահ Արայիկ Հարությունյանը, գլխավորապես ԼՂ ներկայացուցիչների կողմից:

**Տես՝ ստորեւ բերված գրաֆիկը:**


ՀՀ/ԼՂ/Սփյուռքի ներկայացուցիչները առաջնորդների մասին
60.3%
0,1%
8.5%
18.4%
10.4%
2.3%
Նիկոլ Փաշինյան
Արմեն Սարգսյան
Սերժ Սարգսյան
Ռոբերտ Քոչարյան
Լեւոն Տեր-Պետրոսյան
Արայիկ Հարությունյան

## ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐԻ ՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ/ ԻՆՉՊԵ՞Ս

Հակամարտության համատեքստում քաղուժերի քարոզչության ժամանակ հիշատակված արտաքին դերակատարները այլ երկրներն ու միջազգային կազմակերպություններն են:

**Այլ երկրների շարքում** մրցակից քաղուժերի կողմից բոլորից շատ հիշատակվել է Ռուսաստանը: Ավելի շատ, քան Ադրբեջանն ու Թուրքիան: Ընդ որում, ի տարբերություն բոլոր հիշատակված արտաքին դերակատարների, այդ թվում՝ միջազգային կազմակերպությունների, քաղաքական ուժերի կողմից Ռուսաստանը ստաբիլ հիշատակվել է հակամարտության համատեքստի առանց բացառության բոլոր 15 թեմաների համատեքստում: Որպես մի երկիր, որը փաստացի զբաղվում է հակամարտության հետ կապված բոլոր խնդիրներով:

Քաղուժերի ու ՖԲ-յան խմբերի ներկայացուցիչների արտահայտած ընդհանուր վերաբերմունքը հակասական է: Գնահատականների մի մասի համաձայն՝ Ռուսաստանը մնում է այս պահին Հայաստանի առաջնային անվտանգության հիմնական երաշխավորը, մյուսների պնդումներով՝ հենց Ռուսաստանի թողտվությամբ ու համաձայնությամբ է, որ Ադրբեջանն ու Թուրքիան նման վարքագիծ են դրսեւորում եւ առաջացնում նորանոր մարտահրավերներ:

Նիկոլ Փաշինյանի մասին նեգատիվ հիշատակումների մի հատվածը հայ-ռուսական հարաբերությունների առիթով է եղել: Փաշինյանը մի կողմից քննադատվել է այն բանի համար, որ անում է ամեն ինչ, ինչ թելադրում է Ռուսաստանը, իսկ մյուս կողմից՝ այն բանի համար, որ փչացրել է Ռուսաստանի հետ հարաբերությունները[15]:

---

[15] «ՌԴ-ն հավակնում է խլել մեր պետականությունը և ինքնիշխանությունը, Կրեմլը այս լարվածության փայատերն է: Հստակ միտում կա վիժեցնելու միջազգային հանրության մտադրությունը՝ լուծել Արցախի հարցը Մինսկի խմբի շրջանակներում» (Շիրինյան-Բաբաջանյան դաշինքի

**Ընդ որում՝**

- Ռուսաստանի մասին նեգատիվ գնահատականներով առավելապես հանդես են եկել ԱԺԲ-ն, Շիրինյան-Բաբաջանյան դաշինքը, Հանրապետություն, Հայաստանի եվրոպական եւ Ազատ հայրենիք կուսակցությունները:

- Ռուսաստանի մասին միայն դրական ու չեզոք հիշատակումներով հանդես են եկել Պատիվ ունեմ եւ Հայաստան դաշինքները, ՀԱԿ-ը, ԲՀԿ-ն, ԼՀԿ-ն, Հայաստանի դեմոկրատական կուսակցությունը (ՀԴԿ), Հայոց հայրենիք, Միասնական հայրենիք, Վերելք եւ ՔՈ ՍԴԿ կուսակցությունները: Այս ուժերը Ռուսաստանի մասին որեւէ բացասական հիշատակում չեն արել:

---

ՖԲ էջից, մայիսի 27), « Լավրովի պլանը ենթադրում է բանակցության բեմականացում, այնուհետև սահմանազատում, տրանսպորտային ուղիների ապաշրջափակում անվան տակ ՀՀ մեկուսացում արտաքին աշխարհից» (ԱԺԲ ՖԲ էջից, https://www.facebook.com/NatDemAxis), «Ինչ վերաբերում է ՀԱՊԿ-ին, ես կարծում եմ, որ սրանք այն հարցերն են, որոնք ոչ միայն ՀԱՊԿ-ի հետ, այլ նաև Ռուսաստան-Հայաստան երկկողմ խողովակներով պետք է քննարկել: Ընդհանրապես, շատ բան կա անելու տեղում… Էլի մենք սկսում ենք ինչ-որ թիրախ գտնել, տվյալ դեպքում՝ Ռուսաստանը: Նախ՝ պետք է անել հնարավորը սեփական ուժերով: Այն, որ Ռուսաստանը մեզ համար եղբայրական երկիր է, ոչ մեկը չպետք է կասկածի տակ դնի» (ԼՂ ԱԳ նախարար Դավիթ Բաբայանի ՖԲ էջից, մայիսի 29, https://www.facebook.com/dvtbabayan), «Կարող է Ադրբեջանը պահանջի դուրս բերել ռուսաստանյան զորքերը, բայց Ռուսաստանն ու Հայաստանը դրան կարող են չհամաձայնվել: Ի՞նչ է եղել: Ինչու՞ են գրել սա նոյեմբերի հայտարարության մեջ: Որովհետեւ ռուսները մտադիր չեն Ղարաբաղից հեռանալ: Վատ է՞: Եթե ռուսները դուրս գան, մի ղարաբաղցի չի մնա (Ղարաբաղում -Լ.Բ.): Պիտի մնա այնքան, մինչեւ ապահով լինի ղարաբաղցիների համար, մենք էլ պիտի նպաստենք» (Լ. Տեր-Պետրոսյանի հարցազրույցից, մայիսի 31, https://www.facebook.com/armnatlcongress):

Ի տարբերություն Ռուսաստանի, ԱՄՆ-ն ու Ֆրանսիան հիշատակվել են Հայաստանի առաջնային անվտանգության մարտահրավերների, միջազգային զարգացումների, հակամարտության հարցում հնարավոր բանակցությունների, ԼՂ կարգավիճակի եւ այլ խնդիրների համատեքստերում:

Իրանը հիշատակվել է հիմնականում սահմանային խնդիրների, տարածաշրջանային կոմունիկացիաների հարցեր բարձրացնելիս: Վերջին թեմայով հիշատակվել են Վրաստանը եւ Չինաստանը նույնպես: Վրաստանը նաեւ՝ հայ ռազմագերիների վերադարձի[16], վրաց-ադրբեջանական ու վրաց-թուրքական փոխհարաբերությունների համատեքստում:

**Տես՝ ստորեւ բերված գրաֆիկը:**

[16] Ընտրությունների օրերին (հունիսի 12) հայտնի դարձավ, որ Վրաստանի եւ ԱՄՆ կառավարությունների միջնորդությամբ Ադրբեջանը 15 ռազմագերիներ վերադարձրեց Հայաստանին:


Քաղուժերը այլ երկրների մասին/
ինչպե՞ս
0
+
-
Ռուսաստան
36%
15%
49%
703
Ադրբեջան
29%
71%
438
Թուրքիա
38%
62%
220
ԱՄՆ
49%
45%
6%
197
Ֆրանսիա
48%
46%
6%
144
Վրաստան
60%
30%
10%
67
Իրան
73%
24%
3%
91
Այլ երկրներ
53%
39%
8%
109
Հնդկաստան
60%
40%
25
Չինաստան
80%
20%
15

**ՖԲ-յան խմբերում** այլ երկրների հիշատակումների ինտենսիվության պատկերը փոքր-ինչ տարբեր է: Բոլորից շատ հիշատակվել է Ադրբեջանը, ապա Ռուսաստանը եւ Թուրքիան:

ԱՄՆ-ի նեգատիվ հիշատակումների շարքում մեծ է եղել ամերիկյան սփյուռքի ներկայացուցիչների կողմից արված հիշատակումների մասնաբաժինը, Ադրբեջանին հատկացված ռազմական օգնության, Լեռնային Ղարաբաղին ուշացող հումանիտար օգնության, Ադրբեջանի արարքները չդատապարտելու հարցերում[17]:

**Տես՝ ստորեւ բերված գրաֆիկը:**

---

[17] Օրինակ՝ «Որտե՞ղ է USAID հումանիտար օգնության շտապ փաթեթը արցախահայության համար: 100,000 հայեր էթնիկական զտման են ենթարկվել Ադրբեջանի բանակի կողմից, որը ստացել է $ 120,000,000 ԱՄՆ դոլար ռազմական օգնություն: Սակայն այս տեղահանված ընտանիքները 5 միլիոն ԱՄՆ դոլարից պակաս մարդասիրական օգնություն են ստացել», - այս մասին հաղորդվել է Ամերիկայի Հայ դատի հանձնախմբի կազմակերպած օնլայն ստորագրահավաքի մասին պատմող ստատուսով, պահանջով, որ ԱՄՆ-ն դադարեցնի Ադրբեջանին ռազմական օգնության տրամադրումը (մայիսի 26, https://www.facebook.com/ancagrassroots), «Բլինքենի ցինիզմը հասել է Հարավային Կովկաս: Նրանից հետո, երբ Բլինքենը նշան տվեց Ալիևին, որ պատասխանատվություն չի կրի իր արածների համար, դեռ մի բան էլ ֆինանսավորում կստանա, Ալիևի համար կանաչ լույս բացվեց: Ադրբեջանական ուժերը հատեցին սահմանը և գերիներ վերցրին՝ հրապարակելով գերիների նկարները. . . . Փոխանակ Մինսկի խմբի միջոցով փորձեին լուծում տալ խնդրին, մշակութային ժառանգության պահպանմամբ զբաղվեին, Բլինքենը ցույց տվեց Ալիևին, որ ամեն ինչ կարող է մարսել», (մայիսի 27, https://www.facebook.com/ancagrassroots):


ՀՀ/ԼՂ/Սփյուռքի ներկայացուցիչները այլ երկրների մասին
Ադրբեջան
38%
312
Ռուսաստան
27%
223
Թուրքիա
13%
105
ԱՄՆ
10%
82
Ֆրանսիա
4%
34
Իրան
3%
22
Վրաստան
2%
18
Այլ երկրներ
3%
21

**Միջազգային կազմակերպություններ** - Անսպասելի չէր, որ հետազոտված բոլոր խմբերում միջազգային կազմակերպությունների շարքում առավելապես հիշատակվել են ՀԱՊԿ-ը եւ ԵԱՀԿ ՄԽ-ը: ՀԱՊԿ-ը հիշատակվել է որպես կազմակերպություն, որից անդամ երկիր Հայաստանը սպասելիքներ ունի Ադրբեջանի հետ սահմանամերձ լարվածության պայմաններում, նաեւ սահմանափակված է որոշակի արարողակարգային պարտավորություններով իր սուվերեն տարածքի նկատմամբ ոտնձգությունների դեպքում: Իսկ ԵԱՀԿ ՄԽ-ն՝ որպես միջազգային առաքելություն, որի գործունեությունը, չնայած Ադրբեջանի համառ մերժումներին, պետք է վերականգնել ԼՂ կարգավիճակի եւ հակամարտության այլ հարցերի կարգավորման համար: ԵԱՀԿ ՄԽ-ի գործունեության վերսկսումը ներկայացվում է նաեւ որպես ռուս-թուրքական միջնորդական ջանքերի հավասարակշռման միջոց: ԵԱՀԿ ՄԽ-ի նկատմամբ գնահատականների վրա ազդեցություն ունեցան նաեւ հետպատերազմյան ամիսների ընթացքում այդ կազմակերպության՝ անհապաղ քաղաքական գործընթաց սկսելու մասին հայտարարությունները:

Այսպիսով՝ այս երկու կազմակերպություններն անմիջականորեն կապվում են Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի բնակչության առաջնային անվտանգության խնդիրներ հետ:

ՀԱՊԿ-ը միակ կազմակերպությունն է, որը ստացել է նաեւ ամենից շատ նեգատիվ հիշատակումներ: Ըստ քաղուժերի մի մասի պնդումների՝ սա մի կազմակերպություն է, որի անդամներն ավելի շատ դրական հարաբերություններ ունեն Ադրբեջանի, քան նրա անդամ Հայաստանի հետ: ՀԱՊԿ-ի հիշատակումներ ենք արձանագրել նաեւ հակամարտության պամության թեմայի շրջանակներում, հիմնականում 2020թ. պատերազմի դրվագների ներկայացման համատեքստում:

**Ընդ որում՝**

- ՀԱՊԿ-ի ոչ մի նեգատիվ (-) հիշատակում չեն արել Հայաստան եւ Պատիվ ունեմ դաշինքները, ԲՀԿ-ն:
- Դրական (+) հիշատակումներով ՀԱՊԿ-ի մասին արտահայտվել են՝ ՔՊ-ն եւ Հայաստան դաշինքը:

Սահմանային լարված իրավիճակը դարձավ ընտրությունների ընթացքում սովորականից ավելի շատ անգամ ՄԱԿ-ի հիշատակումների դրդապատճառ, որպես մի կազմակերպության, որի ԱԽ-ին պետք է դիմել ՀԱՊԿ-ի դրսեւորած անգործության պարագայում:

Ուրույն դիսկուրս է ծավալվել ՄԱԿ-ի ԱԽ-ին դիմելու հարցի հետ կապված: Չնայած այն հանգամանքին, որ գերակշռել են ուղղակի պնդումներ՝ պետք է դիմել ՄԱԿ-ի ԱԽ-ին, եղել է նաեւ որոշակի թերահավատություն, թե
ի՞նչ իմաստ ունի դիմելը, եթե ՄԱԿ-ի բանաձեւը ոչ ոք չի իրագործելու: Իրագործվե՞լ են ՄԱԿ-ի՝ առաջին պատերազմի ժամանակ ընդունված չորս բանաձեւերը: Ուրեմն ի՞նչ է տալու ՄԱԿ-ին դիմելը, Ադրբեջանը միեւնույն է ընդունվելիք բանաձեւերը չի կատարելու:
Մյուս կողմից եղել են պնդումներ, որ իմաստ ունի դիմելը, քանի որ բանաձեւը փաստաթուղթ է, որն արձանագրելու է իրավիճակը, տալու է քաղաքական գնահատականներ, այն պետք է հետագա գործողությունների համար: Այդ բանաձեւն

օգտագործվելու է այնպես, ինչպես Ադրբեջանն էր անցած տարիներին անընդհատ հղումներ անում ՄԱԿ-ի ԱԽ նախկին բանաձեւերին[18]:

ՄԱԿ-ը երբեմն հիշատակվել է նաեւ որպես մի կազմակերպություն, որը կառուցված է երկրների իրավասուբյեկտայնության սկզբունքով[19]:

ՄԱԿ-ն ավելի շատ անգամ է հիշատակվել, քան ԵՄ-ն, որի հետ Հայաստանն ունի ԵՄ-Հայաստան Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր, քան ԵԱՏՄ-ն, որի անդամն է Հայաստանը 2015 թվականից: Եվրոպական

---

[18] «ՄԱԿ-ի անվտանգության խորհրդից 4 բանաձև է պոկել: Էդ 4 բանաձևերը հնարավորություն տվեցին Ադրբեջանին ռազմական ճանապարհով խնդիրը լուծել: Դրա շնորհիվ աշխարհի ցանկացած երկիր էդ 7 շրջանները համարում էր օկուպացված, և դա իրավունք էր տալիս Ադրբեջանին դրանք հետ բերելու: Հիմա մենք ուզում ե՞նք Ղարաբաղի մեր մասը հետ բերենք՝ ուժով կամ առանց ուժի: Եթե ուզում ենք, ուրեմն պիտի դիմենք: Թեզը, թե անիմաստ է դիմելը, շրջանառում են քաղուժերը, որոնք Ռուսաստանին են սպասարկում: Էդ գծի մեջ գտնվող բոլոր նախկին նախագահները փորձում են դա անել» (Հանրապետություն կուսակցության առաջնորդ Արամ Սարգսյանի ՖԲ էջից, մայիսի 31, https://www.facebook.com/hanrapetutyunparty):

[19] « ՌԴ ԱԳ նախարար Լավրովի հայտարարության կապացությամբ՝ «Դուք առաջարկում եք չշեշտադրել կարգավիճակի հարցը: Եթե կողմնակից եք ազգերի իրավասուբյեկտայնությանը, որի հիմքով կառուցված է ՄԱԿ-ը, ապա բարի եղեք հետեւողական մնալ բոլոր իրավիճակներում: Չի կարելի մի դեպքում պահանջել աշխարհի առաջադեմ վերաբերմունք սեփական ազգային շահերի նկատմամբ (նկատի ունի Ղրիմի բնակչության հանրաքվեն – Լ.Բ.), իսկ ուրիշ դեպքում՝ սատարել մինիսուլթանատի ռեակցիոն փորձերին վերանայելու հայկական ազգային-ազատագրական պայքարի արդյունքները: Արցախի ճանաչումը հակամարտության գլխավոր հարցն է»: Մոսկվայաբնակ վերլուծաբան Ս. Ծատուրյանի ՖԲ-յան էջից (հունիսի 9, https://www.facebook.com/sarkis.tsaturyan):

կազմակերպություններից, առանձին այլ երկրներից ունեցած սպասելիքները ձեւակերպվել են Ադրբեջանի նկատմամբ ճնշումներ գործադրելու, սանկցիաներ կիրառելու տեսքով[20]:

Միջազգային կազմակերպությունների շարքում ընդհանրապես չի հիշատակվել ՅՈՒՆԵՍԿՕ-ն, որն իր մանդատի համաձայն կարող է դերակատարություն ունենալ Ադրբեջանի հսկողության տակ անցած տարածքներում հայկական պատմամշակութային ժառանգության պահպանման գործում:

**Տես՝ ստորեւ բերված գրաֆիկները, նաեւ՝ Հավելված, Աղյուսակ 4:**

---

[20] «Որտե՞ղ է միջազգային ճնշումը, միայն հայտարարություններ ենք տեսնում: Թող սանկցիաներ կիրառեն Ալիևի ընտանիքի բիզնեսների նկատմամբ: Սանկցիաներ կիրառելուց տասը րոպե անց գերիներին ազատ կարձակեն, զորքերն էլ մեր տարածքից կհանեն: Սանկցիաներ կիրառեք Ադրբեջանի դեմ, այ Արևմուտք ջան, մեզ պետք չեն հայտարարություններ» (Լուսավոր Հայաստան կուսակցության առաջնորդ Էդմոն Մարուքյանի ՖԲ էջից, հունիսի 1, https://www.facebook.com/marukyan.edmon):


Քաղուժերը միջազգային կազմակերպությունների մասին/ինչպե՞ս
0
+
-
ՀԱՊԿ
39%
5%
56%
149
ԵԱՀԿ ՄԽ
65%
30%
5%
115
Միջ. կազմ.
87%
13%
55
ՄԱԿ
94%
4%
2%
50
ՆԱՏՕ
67%
33%
30
ԵՄ
28%
67%
5%
18
ԵԱՏՄ
50%
50%
8



ՀՀ/ԼՂ/Սփյուռքի ներկայացուցիչները
միջազգային կազմակերպությունների մասին
ՀԱՊԿ
28%
43
ԵԱՀԿ
ՄԽ
28%
43
ՄԱԿ
18%
29
ՆԱՏՕ
8%
12
ԵՄ
5%
8
Միջ.
կազմ.
13%
21

## ԼՍԱՐԱՆՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏԻ ՆՅՈՒԹԵՐԻՆ

Հայտնի է, որ ՖԲ-ում ընտրական գործընթացների ակտիվությունը գլխավորապես պայմանավորված է հայաստանյան օգտատերերի քանակով[21]:

Տեսական իմաստով ՖԲ-ում պոտենցիալ ընտրազանգվածի հետ աշխատանքը (ոչ միայն սեփական թիմի կարծիքների հրապարակումը, գովազդը, այլեւ օգտատերերի հարցերին պատասխանելը) պետք է կազմեր մրցակից քաղաքական ուժերի քարոզչական գործունեության կարեւոր բաղկացուցիչը: Այնպես, ինչպես նրանք պատասխանում են քաղաքացիների հարցերին կենդանի շփումների ժամանակ: Սակայն ինչպես եւ նախկին նախընտրական գործընթացների ժամանակ է եղել, այս անգամ էլ քաղաքական ուժերը գլխավորապես զբաղվել են քարոզչությամբ եւ հակաքարոզչությամբ, հաճախ անպատասխան թողնելով օգտատերերի՝ իրենց ուղղած հարցերը, կոչերը, քննադատությունը:

Տարբեր են եղել քաղաքական ուժերի պաշտոնական էջերը հավանողների (Like) եւ դրանց հետեւորդների (Followers) ծավալները, որոնք ուղիղ կապված չեն եղել նրանց քարոզչական ակտիվության հետ: Այսպես, օրինակ, մյուս ուժերից ավելի ինտենսիվ քարոզչություն վարած երեք ուժերից ԱԺԲ-ի (հիշեցնենք՝ այս ուժը մեկ օրվա ընթացքում ստաբիլ կերպով մինչեւ 46 նախընտրական նյութ է շրջանառել) պաշտոնական էջի հավանողների եւ հետեւորդների քանակը քարոզչության վերջին օրը (հունիսի 18) կազմել է 30.080, իսկ Մեր տունը Հայաստանն է կուսակցության նույն օրվա

[21] Ընտրությունների ժամանակ ՖԲ-ում գրանցված են եղել 1 500 000 օգտատերեր, որոնց 93,3% (1400 000) 18 եւ ավելի բարձր տարիքի ընտրական իրավունքով օժտված քաղաքացիներ են:

ցուցանիշները քառակի անգամ ավելի բարձր են եղել (122 909 հավանողներ եւ հետեւորդներ): Մինչդեռ Մեր տունը Հայաստանն է կուսակցության քարոզչական ինտենսիվությունը մեկ օրվա ընթացքում առավելագույնը կազմել է 3 նյութ:

Ինչպես գերինտենսիվ, այնպես էլ միջին ինտենսիվ ռեժիմով քարոզչություն վարած ուժերի պաշտոնական էջերի լսարանների ծավալները ավելի փոքր են, քան նրանց առաջնորդների էջերինը: Այսպես է Նիկոլ Փաշինյանի եւ ՔՊ-ի, Էդմոն Մարուքյանի եւ նրա ԼՀԿ-ի, Ռոբերտ Քոչարյանի եւ նրա Հայաստան դաշինքի էջերի դեպքում: Ըստ էության ոչ թե թիմերի, այլ անձերի հետ կապված ՖԲ-յան համակրանք/հակակրանքների այս հատկանիշը դրսեւորովել է նաեւ ուրիշ օրինակներում:

